

ՄԱԹԵՄԱՏԻԿԱՅԻ ՕԼԻՄՊԻԱԴԱ
ՄԱՐԶԱՅԻՆ ՓՈԻԼ 2020-2021
5-րդ դասարան,
Տևողությունը 150 րոպե

1. Իրար հետևից գրում են բնական թվերը մինչև 77-ը (1 2 3 4 5.....75 76 77): Քանի՞ թվանշան է գրված:
1) 77 2) 76 3) 145 4) 143

2. Դասարանի 26 աշակերտները տիրապետում են անգլերեն կամ ռուսերեն լեզուներից գոնե մեկին: Հայտնի է, որ նրանցից 15-ը տիրապետում են ռուսերենին, 20-ը՝ անգլերենին: Քանի՞ աշակերտ է տիրապետում ն՝ անգլերենին, ն՝ ռուսերենին:
1) 9 2) 10 3) 11 4) այլ պատասխան

3. Այս պահից 3 տարի առաջ եղբոր և քրոջ տարիքների գումարը 7 էր: Որքա՞ն կլինի նրանց տարիքների գումարը 5 տարի հետո:
1) 20 2) 17 3) 23 4) հնարավոր չէ որոշել

4. Արկղում կա 4 կարմիր, 5 դեղին, 6 կապույտ և 3 կանաչ գնդակներ: Առանց նայելու արկղից ամենաքիչը քանի՞ գնդակ պետք է վերցնել, որպեսզի համոզված լինեք, որ դրանցից գոնե երկուսը կանաչ գույնի են:
1) 17 2) 3 3) 16 4) այլ պատասխան

5. Քանի՞ եռանիշ թիվ գոյություն ունի, որոնց գրառության մեջ մասնակցում են միայն 0; 1; 2; 3; 4 թվանշանները:
1) 300 2) 400 3) 100 4) 900

6. Հեքիաթային արկղում կա մեկ կախարդական ընկույզ, յուրաքանչյուր մեկ րոպե անց նրանում առկա կախարդական ընկույզների քանակը կրկնապատկվում է: Հայտնի է, որ ամբողջ արկղը կախարդական ընկույզներով լցվում է 136 րոպեում: Որքա՞ն ժամանակում կլցվի այդպիսի արկղի կեսը, եթե նրանում լինելու երկու կախարդական ընկույզ:
1) 134 2) 135 3) 68 4) 34

7. Արմենը Գագիկի մտապահած թվին ավելացրեց 7 և արդյունքից հանեց Գագիկի պահած թվից 5-ով փոքր թիվ, այնուհետև ստացված արդյունքը կրկնապատկեց: Ի՞նչ թիվ ստացավ Արմենը:
1) 22 2) 23 3) այլ պատասխան 4) 12

8. Հայտնի է, որ առաջնությանը մի քանի ֆուտբոլային թիմերի միջև տեղի է ունեցել 55 խաղ: Իմանալով, որ յուրաքանչյուր թիմ մնացած թիմերից յուրաքանչյուրի հետ ունեցել է ընդամենը մեկ խաղ, Որոշել քանի՞ թիմ է մասնակցել առաջնությանը:
1) 54 2) 11 3) 10 4) 9

9. Զամբյուղում կան խնձորներ, ծիրաններ և տանձեր: Ընդհանուր քանակությամբ 37 միրգ: Հայտնի է, որ խնձորների քանակը ծիրանների քանակից 2 անգամ շատ է, իսկ տանձերի քանակը 3-ով քիչ է խնձորների քանակից: Գտնել արկղում առկա ծիրանների և խնձորների քանակը միասին:
- 1) 35 2) 34 3) 24 4) 29
10. 10 տետր գնելու համար Անիի մոտ գտնվող գումարից պակասում է 50 դրամ, իսկ 7 նմանատիպ տետր գնելու համար նրա մոտ ավելանում է 250 դրամ: Որքա՞ն արժե 4 այդպիսի տետրը:
- 1) հնարավոր չէ որոշել 2) այլ պատասխան 3) 40 դրամ
4) 70 դրամ
11. Երկու մեկնարկային կետերից, որոնց միջև հեռավորությունը 880 մ է, միաժամանակ դեմ հանդիման շարժվում են երկու հեծանվորդ, որոնցից առաջինի արագությունը 100 մ/ր է, իսկ երկրորդինը՝ 120 մ/ր: Առաջինի հետ միասին դուրս է գալիս շունը, որի արագությունը 140 մ/ր է: Շունը հասնելով երկրորդ հեծանվորդին անմիջապես ետ է շրջվում դեպի առաջին հեծանվորդը, այնուհետև հասնելով նրան ետ է շրջվում դեպի երկրորդ հեծանվորդը: Այդպես շարունակ շունը այնքան է վազում երկու հեծանվորդների միջև, մինչև նրանք հանդիպեն: Քանի՞ մետր է վազում շունը:
12. Արամը բազմապատկեց 2021-ից մեծ հաջորդ 20 բնական թվերը (2022-2023-2024.....) և արդյունքից հանեց 2021: Գտնել Արամի ստացած թվի վերջին երեք թվանշաններից բաղկացած թիվը:
13. Առաջին և երկրորդ արկղերում միասին կա 44 մանդարին: Երկրորդում և երրորդում միասին կա 47 մանդարին, երրորդում և առաջինում միասին՝ 45 մանդարին: Քանի՞ մանդարին կա երկրորդ արկղում:
14. Արսենի տարիքը 8 անգամ մեծ է Կարենի տարիքից, իսկ Կարենը 28 տարով փոքր է Արսենից: Կարենի և Գևորգի տարիքների գումարը 14 է: Քանի՞ տարեկան է Գևորգը:
15. Յոթ ֆուտբոլային թիմերի միջև տեղի է ունեցել առաջնություն: Բոլոր թիմերը խաղացել են բոլորի հետ մեկական խաղ: Հաղթանակի դեպքում տրվել է 3 միավոր, պարտության դեպքում 0 միավոր, իսկ ոչ-ոքի դեպքում 1 միավոր: Թիմերը մրցաշարի ավարտին ըստ իրենց հավաքած միավորների դասակարգվել են հետևյալ կերպ՝ 14; 13; 9; 8; 7; 4; 3: Քանի՞ խաղ է ոչ-ոքի ավարտվել: